

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով
09.08.2020թ. կայացված ԱՖ410419 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց
բավարարման թողնելու մասին

<<11>> 09 2020թ. 7-13- 11082

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ
Ե.Կարապետյանս, վերանայելով Սուրեն Ստեփանյանի ՄԴ/109139-20 և ՄԴ/118293-20
նույնաբովանդակ դիմումների քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Մանանդյան փողոցի 26 շենքի 6 բնակարանի բնակիչ Սուրեն
Ստեփանյանը նույնաբովանդակ դիմումներով իր անհամաձայնությունն է հայտնել
Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով
09.08.2020թ. կայացված ԱՖ410419 որոշմանը՝ նշելով, որ տրանսպորտային միջոցը վարել
է գործող ԱՊՊԱ պայմանագրով : Միաժամանակ հեռախոսակապի միջոցով հայտնել է, որ
դիմումին ավելացնելու ոչինչ չունի:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության
վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 09.08.2020թ. կայացված ԱՖ410419
որոշումը ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության
պարտադիր ապահովագրության մասին>> 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝
յուրաքանչյուր անձ պետք է մշտապես ունենա սեփականության իրավունքով իրեն
պատկանող (ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով իրեն
տրամադրված) և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված յուրաքանչյուր
ավտոտրանսպորտային միջոցի համար կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագիր:
**Արգելվում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով
ավտոտրանսպորտային միջոցի վարումը, եթե դրա համար առկա չէ այն վարելու
պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր:**

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ **09.08.2020թ. ժամը՝ 12:55-ին** Սևան -
Մարտունի - Գետափ 59 կմ ճանապարհահատվածում քաղաքացի Սուրեն Ստեփանյանի
վարած <<PORSCHЕ CAYENNE>> մակնիշի 35CP053 հաշվառման համարանիշի
տրանսպորտային միջոցը կանգնեցվել է Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ
սպայական գումարտակի 4-րդ սպայական վաշտի 1-ին սպայական դասակի տեսուչներ,
ոստիկանության կապիտաններ Մ.Երվանդյանի և Ն.Եսայանի կողմից: Ստուգմից պարզվել
է, որ վարորդն ավտոմոբիլը վարել է առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու:
Վարորդի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ
արձանագրություն և կայացվել ԱՖ410419 որոշումը:

Ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից տրված պարզաբանման
համաձայն՝ քաղաքացի Սուրեն Ստեփանյանի կողմից ավտոմոբիլն առանց գործող ԱՊՊԱ
պայմանագրի վարելու փաստը հայտնաբերվել է ՃՈ էլեկտրոնային ռեսգիստրի միջոցով,
որտեղ նշված է եղել, որ <<PORSCHЕ CAYENNE>> մակնիշի 35CP053 հաշվառման
համարանիշի ավտոմոբիլը չունի գործող ԱՊՊԱ պայմանագիր, ինչի կապակցությամբ
կազմվել է համապատասխան արձանագրություն և կայացվել ԱՖ410419 որոշումը:
Միաժամանակ ոստիկանության ծառայողները հայտնել են, որ իրենց և վարորդի միջև
ծառայողական բնույթի խոսակցություններից բացի այլ խոսակցություններ չեն եղել:

«Ապահովագրական բյուրոյի հայտնած տեղեկատվութիւն համաձայն՝ «Porsche Cayenne» մակնիշի 35CP053 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը ապահովագրվել է «Ռոսգոսստրախ Արմենիա» ապահովագրական ԱՓԲԸ-ում 09.08.2020թ. և հատկացվել է SN899370 ԱՊՊԱ վկայագիրը, որն ուժի մեջ է **09.08.2020թ. ժամը 17:00-ից մինչև 09.08.2021թ.-ը:**

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա է վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը, քանի որ «Porsche Cayenne» մակնիշի 35CP053 հաշվառման համարանիշի ավտոմոբիլի վկայագիրն ուժի մեջ է մտել **09.08.2020թ. ժամը 17:00-ին**, իսկ իրավախախտումը հայտնաբերվել է **09.08.2020թ. ժամը՝ 12:55-ին:**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 09.08.2020թ. կայացված ԱՖ410419 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել «Վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 2-րդ սպայական գումարտակ և Սուրեն Ստեփանյանին:

Կատարող՝ Ա.Մարգարյան
Հեռ.՝ 011-544783



Ե.Կարապետյան